ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ

0009, ՀՀ, ք. Երևան, Կորյունի 15/1, 010 511 820, www.court.am

№ ԴԴ-3-Ե-7664

« 04 » հոկտեմբերի 2024թ.

«ԴԻՋԻԲԵՅՍ» ՍՊԸ-Ի

ՏՆՕՐԵՆ Ե. ԲԱՐՍԵՂՅԱՆԻՆ

(ՀՀ, Երևան, Փավստոս Բուզանդ Փ 15 հարկ 4,

տարածք 34)

Հարգելի՛ պարոն Բարսեղյան,

Սույնով ծանուցում եմ, որ Դատական դեպարտամենտի կարիքների համար անվտանգության ապահովման սարքերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-24/28» ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում գնահատող հանձնաժողովի կողմից մասնակցի հայտերի գնահատման արդյունքում Ձեր կողմից ներկայացված հայտում արձանագրվել են հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ, մասնավորապես՝

«ԴԻՋԻԲԵՅՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում.

- դիմում-հայտարարության (Հավելված N 1) 1-ին կետում ընթացակարգի ծածկագիրը սխալ է նշված,
- բացակայում է (կցված չէ) իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի ձևը (Հավելված N 1.3),
- eauction.armeps.am համակարգ մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը չի համապատասխանում հրավերով սահմանված պայմաններին, մասնավորապես՝
    - բացակայում են «Էներգիայի երկու մակարդակներով և թունելային պատուհանիկով երկռեժիմ զննության ռենտգեն հսկողության սարք» բառերը,

- ապրանքի ֆիզիկական բնութագրում նշված է «1665mm×766mm×1237mm», սակայն հստակեցված չէ, թե նշվածներից որն է ապրանքի երկարությունը, լայնությունը և բարձրությունը,
- թունելային պատուհանիկի չափերի բնութագրում նշված է «500mm×300mm», սակայն հստակեցված չէ, թե նշվածներից որն է ապրանքի լայնությունը և բարձրությունը,
- բացակայում է աղմուկի մակարդակի բնութագրի վերաբերյալ նշումը, այն դեպքում, երբ հրավերով սահմանված է «աղմուկի մակարդակը՝ առավելագույնը 55 դբ»,
- ճառագայթման արտահոսքի բնութագրում՝ բացակայում են «մակերևույթից 5 սմ բարձրության վրա» բառերը:

Վերոգրյալով պայմանավորված, և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետի, ինչպես նաև «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-24/28» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի ՄԱՍ I-ի 8.11 կետը առաջարկում եմ մինչև սույն թվականի **հոկտեմբերի 7-ը ներառյալ** շտկել վերոնշյալ անհամապատասխանությունները:

Միաժամանակ հայտնում եմ, որ սահմանված ժամկետում արձանագրված անհամապատասխանությունները չշտկելու դեպքում՝ հայտը կգնահատվի անբավարար և կմերժվի:

ՂԵԿԱՎԱՐԻ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ
ՏԵՂԱԿԱԼԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

ԱՐՇԱԿ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ

Կատ՝ «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-24/28» ծածկագրով
գնման ընթացակարգի համակարգող՝ Ա. Հովհաննիսյան
Հեռ.՝ /+374 10/ 511-774